

# Armenian Church Of Our Saviour

Ս. ՓԻԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՌԻՍՏՐԻ



7 Փետրուար, 1979

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Այսու կուգանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Կիրակի, Յունուար 28, 1979 եկեղեցական պաշտամունքէն անմիջապէս ետք 154 անդամներու մասնակցութեամբ: Եկեղեցւոյս տրատու անդամներուն թիւն է 571:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը Մխական Խորհուրդին, Հաշուեքննիչ Յանձնախումբին եւ Ընտրողական Յանձնախումբին: Մխական Խորհուրդի նորընտիր անդամներն են Տիարք՝ Ղազար Ղազարեան, Թորգոմ Պօյաճեան, Քէնէթ Գրիգորեան, Հըրպըրթ Ալեքսանտր եւ Փօլ Տէյվիս:

Ներիակ կը գտնէք եկեղեցւոյս տարեկան տեղեկագիրներու գրքոյքը, ինչպէս նաեւ ծխական ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց քուէաթուղթէն օրինակ մը թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով, թեմական պատգամաւորներուն անուններն ու հասցէները, եկեղեցւոյս օժանդակ մարմիններու ատենապետներու անունները, հասցէներն ու հեռաձայնի թիւերը, Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրները, ծխական ժողովի ատենագրութիւնը, ծխական ժողովի ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը եւ անդամներուն ղրկուած հրաւիրագրէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ տեղեկութիւնները Ձերդ Սրբազնութեան բարձր նկատողութեան կը խնդրենք Մխական Խորհուրդի նորընտիր անդամներուն վաւերացումը:

Մաղթելով Ձերդ Սրբազնութեան թեմական գործերուն կատարեալ յաջողութիւն ի Տեառնէ,

Մատչիմք ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Աղօթակից  
*Կարէտ վրէժեպետ*  
Եղիշէ Ս. Կրդ. Կիզիբեան, Հովիւ եւ  
Նախագահ Մխական ժողովի

